

լի ծանօթ է եղեր, ինչպէս որ գըրուածքներէն կերեւնայ. մեղք որ ջրերը չորս գիշն մէջը վազելով կերեւնայ թէ քիչ ատենէն պիտի աւրեն աս կտորը: Այն բնական կամուրջէն ետ դառնալով Փիուքա գետին աջ կողմը կանցնիս, 86 աստիճանով ժայռի մը վրայ կեւլես, և ուրիշ մուտքով մը այլ և այլ նոր տեսարաններու մէջ կըմտնես. ասոնց մէջ մատուռ ըսուած տեղ մը կայ որ մարդ չկրնար մէջը մտնել, և քովի պաղանձաւին զարնես նէ անանկ կըխօսի որ կարծես թէ մեծ զանգակ մըն է: Այն մուտքէն 700 ձողաչափ հեռու վարագոյր ըսուած միջոցը կըհասնիս, որ վարագուրի ձեով գեղեցիկ ու կէսթափանցիկ կարմիրու ճերմակ պաղանձաւներով զարդարած է. աս կտորին պատկերն է մեր հոս գրածը: Ուրիշ տեղ մը մեծ ջրվեժ մը կերեւնայ՝ պաղանձաւներէ ձեացած. անկէ ալ հեռու պաղանձաւէ սիւն մը կայ, որուն վերի կտորը արձանի նըման ըլլալով սուրբ Ստեփանոս կըսուի: Այս արձանին հարաւային կողմը կիյնայ գեղեցիկ պաղանձաւէ սիւն մը որ գետնէն վեր բարձրացած է, ու վրան աւազանի ձեով կլոր է. աս աւազանին մէջ այրին ձեղունէն կաթիլ կաթիլ ջուր կըվազէ, ու վազած ատենը մէկ կողմանէ ալ քարանալով վերէն վար գեղեցիկ պաղանձաւ մը ձեացեր է որ ջուրը վրայէն յստակ աղբիւրի մը պէս կըվազէ, ու ծայրը հասնելէն ետեւ կըկաթէ:

Բոլոր այրին էն հեռու տեղը որ ինչուան հիմա կրցեր են հասնիլ՝ 1310 ձողաչափ է մուտքէն. անկէ անդին ալ կերեւնայ թէ շատ տեղ կայ, բայց մէջտեղը մեծ լիճ մը կոխած է որ անդին անցնիլը անկարելի է: Այս լճին մէջ տեսակ մը ձուկ ալ կըգտնուի ճերմակ, որ ամենեւին լոյս տեսնել չուզեր: Այրին մէջը անվտանգ պտըտելու համար՝ շատ տեղ ճամբաներ բացած, կամուրջներ ձրգած, սանդուխներ փորած ու բարձր կենալու տեղուանք շինուած են. մար-

դիկ ալ կան որ այրին շատ կողմերը գիտնալով ձեռուրնին մեծամեծ ջահեր բռնած՝ ճամբայ կըցուցնեն աս բնութեան հրաշալի գործքը տեսնել ուզողին: Տեղացիք կըպատմեն թէ աս տարիներս իրեք չորս անգղիացի ճամբորդներ իրենք իրենց գլխուն այրին մէջը մտեր են ու մէյմըն ալ դուրս չեն ելած. հաւանական է որ լճերուն կամ փոսերուն մէկուն մէջ ընկած խղդուած ըլլան. մանաւանդ որ գրեթէ բոլոր այրին մէջ մուծ ու խաւար է, և միայն մուտքէն քիչ մը լոյս կառնէ, ան ալ խիստ քիչ տեղ:

ԱՂԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սոսաւսի գլխաւորական ու խաղաղական պաշտօններուն մէջ երեւելի եղած հայազգի իշխաններ:

ԱՅՏ ազգին բնական ու բարոյական կատարելութիւնները համընկելու ատեն անաչառ դատաստան ընողը կըտեսնէ որ մեր ազգը օտար ազգերու սիրով ծառայելուն համար պէտք չէ որ ազգատեաց սեպուի. հապա նոյն յատկութիւնը իրեն կատարելութիւն սեպելու է, և այն պիտի կատարելութիւն մը որ թէ իրեն և թէ ազգին և թէ օտարներուն օգտակար է: Այս յիրաւի. հին ու նոր պատմութեանց մէջ, արեւելեան ու արեւմտեան տէրութեց մէջ, հայերը ինչ պաշտօնի կամ ինչ ծառայութեան որ ձեռք զարկեր են՝ միշտ գովելի եղեր են իրենց հաւատարմութեամբն ու քաջութեամբը. ասանկով թէ իրենք աղէկ անուն ունեցեր են ու սիրելի եղեր են օտարներուն, և թէ իրենց ազգին անունը պայծառացուցեր են: Շատին յայտնի է թէ հին ու նոր ատենները Պարսից, Յունաց ու Սմանցոյ տէրութիւններուն ծառայութեանը մէջ որչափ երեւելի հայեր մեծ անուն ու

մեծամեծ պաշտօններ ունեցեր են . բայց շատն ալ չեն գիտեր թէ ուրիշ տէրութեանց ծառայութեանը մէջ ինչ անուանի հայեր եղած են . անոր համար մենք հոս Ռուսաց զինուորական ու քաղաքական պաշտօններուն մէջ երեւելի ազգայինները կը յիշենք : Իրաւ է որ Ռուսաց թագաւորները առջի բերան Պարսից հետ պատերազմ ունեցած ատեննին՝ հայ ազգի իշխանները մեծամեծ խոստմունքներով որսալու ետեւէ եղան , ու զօրավարութեան պաշտօններու հասուցին . բայց աս բանս հայերուն նախատինք չսեպեր մէկը՝ թէ որ գիտնայ թէ ինչ նեղութիւններ կը քաշէին ետքի ատենները Պարսից բռնութեան . մանաւանդ թէ իրենց պատիւը կաւեճայ ասով , որ Ռուսաց թագաւորները այնչափ վստահութի կառնէին մէկէն անոնց վրայ :

Եւ ինչ իրաւարինէ Բ կայսրուհին օրերը և անկէ ետքը շատցան ու անուանի եղան հայ զօրապետներն ու պաշտօնատէրները Ռուսաց մէջ :

Ա . Բուսանցով . Օտտուսյսքիին սպարապետութեան ատենը զօրքին գնդապետներէն մէկն էր Պասպէրեան անունով հայ իշխանը , և գնդապետի փոխանորդ՝ արքայազուն՝ Բմբատեան Ստեփանոսը :

Բ . Երիմը առնող Փոթեմքին իշխանին սպարապետութեան ժամանակը քաղաքական պաշտօններու մէջ մեծ անուն ունեցաւ Յովհաննէս Լազարեան . պարոնը , որ Երիմի հայերուն դէպ 'ի Լախու կողմերը փոխադրուելու ատենն ալ շատ օգնութիւն րաւ անոնց :

Գ . Սանաւոր կերպով մեծ պատիւներ ընդունեցաւ կայսրուհին ու Փոթեմքինէն մեծանուն արքայը արքայազուն Յովսէփ կաթողիկոս Լորկայնաբազուկ Լորդութեանց : Երջն

1 Արքայազուն կրտսեր ուսերէն քեւալ , ու ի տալերէն Ժոննէի ըստած պատուանունին , թէ պէտ աս պատիւ ունեցողները ամէն ալ անմիջապէս Թագաւորական ցեղէ չեն ըլլար :

ատենները Թագաւորական զօրաց հա՛ գնդապետներուն ու զօրավարներուն մէջ երեւելի էին Սինաս Լազարեան , և Յարութիւն Լազարեան զօրավարները . առանձին գունդ մըն ալ կար կամաւոր հայ կտրիճներու , որոնց գնդապետն էր Լաքահամեան իշխանը . իսկ հայ հարկւրապետներէն գըլ խաւորներուն անուններն են՝ Խոճամալեան , Ուլուխանեան , Սկրտիչեան , Լալազեան , արքայազուն Սասիլ Լորկայնաբազուկ Լորդութեանց , Սահանեան , Յովհաննէս և այլն :

Դ . Սուլթանով իշխանին սպարապետութեան ժամանակը անուանի եղած են հայերէն Հաստատեան , Սանեան , Լալայեան գնդապետները , որ սպարապետին ալ շատ սիրելի էին , մանաւանդ վերջի երկուքը . Հաստատեանը իրեն քաջութեամբն ու արդիւնքովը ինչուան մեծ ընդհանուր զօրապետ եղաւ . ու շատ պատուոյ նշաններ առաւ , իսկ Սանեանը Լամայիլի բերդին առնուելու ատենը մեծ քաջութիւն զարնուելով ընկաւ մեռաւ :

Ե . Պօղոս կայսեր օրերն ալ Սատարինէին ժամանակի զօրավարներէն զատ անուանի եղան մեծ ընդհանուր զօրապետը՝ Բուզանեան , նը մանապէս Լապետեան երկու եղբարք , Լաւմեքեան իրեք արքայազուն եղբարք , Լազարեան երկու եղբարք , Պաւլութեան զօրավարը Խաղախներու գնդին , և ձիաւոր զօրաց զօրապետ Սանուջահեան երկու եղբարք , ու Պասպէրեան իշխանը :

Զ . Լաքսանդր Ե կայսեր ժամանակը խիստ անուանի եղան Սիրզայեան Սանուկ պէյ քաջ իշխանը , արքայազուն մեծ զօրապետը Սատաթեան՝ Վարապաղի . Լազարեան , Լապետեան , Խոճայեան զօրավարները և ուրիշ քաջեր . քաղաքական իշխանութեանց մէջ ալ արքայազուն Սեւիքեան իշխանը , Պապիկ իշխանը և ուրիշ երեւելի անձինք :

Է . Լափուէոնին դէմ գնացող զօր-

քին մէջ ալ շատ անուանի հայ զօրավարներ կային . ամէնէն երեւելիներն են մեծ ընդհանուր զօրավարները Սատաթեան, Տելեան, Լքամելիք, ու Սելիքեան . ասիկայ քաջութեամբ առաջնետուելով պատերազմի ատեն աջ ձեռքը կորսնցուց : Տելեան երկու եղբարց մէկը պատերազմի մէջ ընկաւ մեռաւ . նմանապէս Յարուլթիւն Լազարեան՝ քաջ ու վեհանձն կտրիճը, որ ռումբէ մը զարնուեցաւ մեռաւ 1813ին Լիփսիայի պատերազմին մէջ :

Ը . Հիմակուան կայսեր ժամանակը զանազան պատերազմներու մէջ մեծ անուն հանեցին քաջութեան և իմաստութեան կողմանէ խիստ շատ հայ զօրավարներ ու գնդապետներ . ասոնցմէ շատը հիմա դեռ կենդանի են, ոմանք ալ վախճանեցան . գլխաւորներուն անունները հոս դնենք .

Սատաթեան արքայազուն իշխան՝ փոխանորդ ընդհանուր զօրապետի . ասիկայ Շուլմայի պատերազմին ատենը մեռաւ բանակին մէջ, ու առաջ հոն թաղուեցաւ, ետքը մարմինը Բեթրպուրկ տարուեցաւ :

Լազարեան Յովհաննէս խորհրդական տէրութեան .

Խուդաբաշխեան Լքեքսանդր խորհրդական տէրութեան .

Բեհբուտեան արքայազուն իշխան՝ ընդհանուր մեծ զօրավար, վերատեսուչ հայկական նահանգին .

Լազարեան Լադիազար գնդապետ .

Սանուշահեան արքայազուն իշխան ճարտարապետ տեսուչ ճանապարհաց և գնդապետ .

Լքամելիք արքայազուն իշխան գնդապետ .

Խուդաբաշխեան Յարուլթի խորհրդական ատենի .

Ղալանդարեան
Տերղուկասեան
Ղալրիթեան
Լըրիցփոխեան

Սմբատեան արքայազուն իշխան մեծ զօրապետ .

Խուդաբաշխեան Պրիգոր խորհրդական ատենի .

Լըրկայնաբազուկ Լքղուլթեց արքայազուն իշխան՝ խորհրդական արքունի .

Լալայեան արքայազուն իշխան՝ խորհրդական արքունի .

() րեշով՝ խորհրդական արքունի .

Ղարխանեան արքայազուն իշխան .

Լորիս Սելիքեան .

Շահրիստանեան .

Խոճենց .

Ղուշմալեան .

Լսկարխանեան .

Բերոյեան .

Ստեփանեան .

Բաղտաաթեանք .

Ղասպերեան .

Յովհաննեան .

Լնոսեան .

Ուլուխանեան .

Լկուլեան .

Սուրատեանք .

() դաբաշեան .

Լքեքսանդրեան .

Շահազիզեան .

Լնիկոլորեան .

Լալայեան երեք եղբարք .

Ղալանդարեան .

Ղուրգենեան .

Լքղումանեան, և այլն :

Լս առանց մասնաւոր պաշտօնի յիշուածներն ալ այլևայլ աստիճանի գնդապետներ ու հարիւրապետներ են :

Լսոնցմէ զատ շատ ռուս կամ վրացի իշխաններ ու զօրավարներ ալ կան որ կամ իրենց նախնիքը, կամ ծնողքը, կամ թէ հօր կամ մօր կողմանէ հայազգի են . ինչպէս արքայազուն Պետրոս Բագրատիոն իշխանին մեծ մայրը հայ էր, և իրեն եղբայրը Ռոման Բագրատիոն՝ Յովհաննեան ցեղէն Լննա Սիմոնեան անունով իշխանուհին առեր էր : Լսանկ ալ Տանաուրեան ,

1 Կրցաւինք որ աս անունին հայերէնն ինչպէս ըլլաւ Էրցանք մականբերել :

Լիւթերտեան ու Լաւրուզեան ուսու
իշխաններուն պապերը հայազգի էին,
թէպէտ և աս ցեղերն ալ ուսուի հընչ-
մամբ Տանաճերով, Լիւթերտով ու
Լաւրոզով կըսուին¹ :

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

Առաջ :

Ատենով Դամասկոսի կողմերը մարդուն մէկը իր
ջորին յիսուն տարի բանեցընելէն ետքը ազատ կը
թողու: Գայլն ու աղուէսը կը հանգիւպին աս ջո-
րին, « Եկուր ջորի աղբար, կըսեն. հիմա որ ա-
զատ ես՝ մէկտեղ ընկեր ըլլանք. ինչ որ ձեռքերնիս
իյնայ՝ մէջերնիս հաւասար բաժնենք »: — « Զէ,
կըսէ ջորին, աս ըլլալու բան չէ. դուք երկուքնիդ
ալ միս ուտել սորված էք. ես ձեզի հետ ընկեր
չեմ կրնար ըլլալ »: Երգում կընեն գայլն ու ա-
ղուէսը թէ « Երգմէ թէ որ քեզի մնաս մը գալի
նէ՝ սանկ ըլլանք նանկ ըլլանք »: ջորին ալ հա-
տայ անոնց երգմանը, սկսաւ հետերնին քալել:
Ասոնք իրեքը անապատ տեղ մը հասան. ջորին իր
սորվածին պէս կարճ կարճ խոտերը կը փրցընէր
կուտէր. իսկ գայլն ու աղուէսը հինկ վեց օր ան-
թի մնալէն ետեւ սկսան իրարու հարցընել, թէ աս
մեր բանը ինչ պիտի ըլլայ: Աղուէսն ըսաւ թէ
ջորին կուտենք. գայլը պատասխան տուաւ թէ
« Հապա ընտոր կըլլայ որ այնչափ երգում ըրինք »:
— « Իրաւունք մը կըգտնենք ու անանկով կու-
տենք, հոգ մընէր ըսաւ աղուէսը. ես մէկ խնդիր
մը կըբանամ, դու նայէ որ տարիք վերէն բըռ-
նես, ինչպէս որ ես ալ կընեմ. ու երբոր ես ըսեմ
թէ իրաւունք է որ պզտիկը մեծին կերակուր ը-
լայ, դուն ալ հա ըսէ »: Աս ըսելով կերթան ջո-
րին քովը, և աղուէսը կըսէ անոր. « Կայէ, բա-
րեկամ. վեց օր է որ մենք բերաննիս բան չենք դը-
րած. լակոտներս ալ քովերնիս չին որ ուտենք. բայց
յայտնի է թէ պզտիկը մեծին իրաւունքով
կերակուր կրնայ ըլլալ. ուրեմն դու գատաւոր ե-
ղեր, մենք տարիքնիս համրենք, ու որուն տարիքն

որ քիչ է՝ մեծին կերակուր ըլլայ: Դուն քանի՞
տարեկան ես »: Գայլը պատասխան տուաւ թէ
« Տարիքս չեմ համրած. բայց աս միտքս է որ պզ-
տիկու թեանս ատեն օր մը հայրս աղէկ ծեծ մըբա-
շեց ինծի՝ ինչո՞ւ Ագամայ Զաղացքին էջը կերար ը-
սելով »: Աղուէսին հարցուցին. « ան ալ ըսաւ թէ
« Իմ տարիքս նշանը ան է, որ Կոյ նահապետին
տապանին մէջ աշխարհք եկեր եմ: անոր համար
հայրս անունս ալ նաւու աղուէս գրեցէր »: Խեղճ
ջորին հասկըցաւ իր գլխուն գալիքը. որ ինչուն
ան ատեն՝ ասոնց մէջ ինծմէ ծեծըր չկայ ըսելով
մտքէն՝ անվախ կեցեր էր: Մէյմըն ալ աղուէսն ու
գայլը դարձան ասոր հարցուցին. « Աղբար, դուն
քանի տարեկան ես »: Պատասխան տուաւ թէ
« Տարիքս միտքս չէ. միայն թէ Դամասկոս տէր մը
ունէի, անոր գեղը ծնած եմ ես. անիկայ իմ ոտ-
քիս պայտ¹ մը զարնել տուեր է որ վրան թուա-
կանը գրած է, անկէ կըհասկընաք տարիքս. հիմա
առջևի ոտուէներս պայտ չկայ. թէ որ կարգալ
գիտէք նէ ետեւի ոտքս նայեցէք, կըհասկընաք »:
Գայլը աղուէսուն « Գնա կարգալ » ըսաւ. աղուէ-
սը պատասխան տուաւ թէ « Ես փակագիր չեմ
կրնար հանել »: ան ատեն գայլը ելաւ, « Ո՛ւր է
հոս գիր չերկնար » ըսելուն չմնաց, ջորին ասոր
գլխուն կիցք² մը նետածին պէս՝ գայլուն ըզեղը
ցիրուցան եղաւ: « Աստուած ողորմի հօրս հոգուն
որ զիս կարգալու չէ տուած. չէ նէ աս կիցքը ես
կուտէի » ըսաւ աղուէսը:

Աս խօսքը իրաւամբ կրնան քսել նաեւ ան մար-
գիկն որ կըտեսնեն թէ ինչպէս ոմանք իրենց գի-
տու թիւնը և ուսումը գէշի գործածելով՝ գէշ
գրքեր կըկարգան՝ մանաւանդ օտար լեզուներով
գրուած, ու խելքերնին կըտարտըղնի, կըրցուի,
կապականի: Բայց ոմանք ալ յանիրաւի կըզուրցեն
նոյն խօսքը՝ երբոր իրենց տգիտութեանը վրայ կը-
պարծին, ու կարգալ գրելը աւելորդ բան մը կը-
սեպեն. այսպիսիները կրնան մտածել թէ ան խօս-
քը ըսող աղուէսը աղէկ ուսում առած ըլլար նէ՝
գուցէ ջորին խօսքէն չէր խաբուէր, զգայլը փոր-
ձանքէն կազատէր, ու ինքն ալ անօթի չէր մնար:

« Լաւ է կոյր աջօք, քան կոյր մտօք » կըսէ Ե-
ղիշէ. և ճշմարիտ է. վասն զի տգիտութիւնը այն-
պիսի կուրու թիւն մըն է որ ոչ միայն մարդու մար-
մինը, այլ նաեւ հոգին ալ շատ փոսերու մէջ կըր-
նայ ձգել: Բայց ճշմարիտ է ան խօսքն ալ որ ըսեր
են՝ թէ ալ աղէկ է ամենեւին չգիտնալ կամ ագէտ
ըլլալ, քան թէ գիտցածը ծուռ կերպով գիտնալ,
կամ ան բաները գիտնալու ետեւ ըլլալ որ հար-
կաւոր չեն: Վասն զի տգէտը, մանաւանդ ակա-
մայ տգէտ մնացողը, ուրիշներուն խղճալը կըբերէ.
ծուռութեամբ գիտցողը՝ ուրիշներուն բարկութիւնը
կըշարժէ. իսկ պէտք չեղած բաները գիտնալու ե-
տեւ եզոյղ՝ թէ իրեն և թէ ուրիշներուն մեծամեծ
մնասներ կրնայ ընել:

1 Նու:

2 Թէպէ:

1 Աս աւթով չենք կրնար լուել ու մեր տհաճու-
թիւնը չցուցընելան սովորութեանը վրայ որ մեր ազ-
գայինք ունին. որ է իրենց մականունը փոխել՝
ծռել և օտար վերջաւորութեամբ խորթացընել:
Ռուսի լեզուին կանոնը թէ որ կըսա հանջէ որ մակ-
անունները ոչ վերջանան, որովհետեւ աս վերջա-
ւորութիւնը մեր էան կամ էան մասնիկին կըսա-
տասխանէ գէթ հայերէն հնչելու և գրելու ատեն
հարկաւ կըվայլէ որ էան վերջացուին, ինչպէս ը-
րինք մենք ալ աս անունները հոս յիշելու ատեննիս: